ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

N1 22.01.2013թ.

ՈՐՈՇՈՒՄ

2013Թ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 18-րդ կետի պահանջներով:
Քաղցրաշեն համայնքի ավագանին

Որոշեց՝

Հաստատել Քաղցրաշեն համայնքում 2013թ-ի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետա-շինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տրամադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանելէ հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 7500 դրամ:

բ) սյուն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բ.ա) 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 15.000 դրամ

)

բ.բ) 501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25.000 դրամ:

բ.գ) 1001–ից 3000քմ քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 50.000 դրամ և 3000քմ ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես օբյեկտների համար 80000դարմ:

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

գ) մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 1500դրամ:

դ) 20 և ավելի քմ ընդհանուր մակեես ունեցող օբյեկտների համար 2500դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վրակառուցման, ուժեղացման, վերանորոգման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետա-շինարարական նախագծով

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ:

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերըէ օբյեկտի ընդհանուր մակերեսի

ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա,սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանել 2500 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակ 4000 դրամ:

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակ 3000 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա. բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքերը սահմանել յուրաքանչյուր օրվա համար 100դրամ 1քմ-ի համար:

բ. հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքերը սահմանել 150.000 դրամ:

6. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճենները տրամադրելու համար սահմանել 500 դրամ:

7. Մրցութներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար սահմանել 1000 դրամ:

1. Կ. Արարատյան
2. Գ. Փալիկյան
3. Խ.Սահակյան
4. Ի. Սահակյան
5. Ա. Հակոբյան
6.Յ.Մկրտչյան
7. Հ. Հակոբյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

N2 22.01.2013թ.

ՈՐՈՇՈՒՄ

ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ, ՔԱՂՑՐԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԵՎ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 26-րդ կետի պահանջներով: Համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել գյուղապետարանի աշխատակազմի, մանկապարտեզի և երաժշտական դպրոցի աշխատակիցների թվաքանակների, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը (հավելված 1,2)

1. Կ. Արարատյան
2. Գ. Փալիկյան
3. Խ.Սահակյան
4. Ի. Սահակյան
5. Ա. Հակոբյան
6. Յ.Մկրտչյան
7. Հ. Հակոբյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

Հավելված 1
22.01.2013թ կայացած Քաղցրաշենի
համայնքի ավագանու N2 որոշման

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ , ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԵՎ ԵՐԱԺՇՏ. ԴՊՐՈՑԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

2013թ

Աշխատակիցների թվաքանակը՝ 51

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄՈՎ/
Համայնքի ղեկավար		170000
Հայեցողական պաշտոններ		
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	119000
Համայնքային ծառայության պաշտոններ		
Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար (1.2-1)	1	120000
Գյուղապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ (2.3-1), (2.3-2)	2	119000
Գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (3.1-1), (3.1-2)	2	86000
Գյուղապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ (3.2-1)	1	81000
Գյուղապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ (3.3-1)	1	80000
Պայմանագրային աշխատողներ		
Մշակույթի տան տնօրեն	1	80000
Գեղմասվար	1	63000
Գրադարանավար	1	56000
Գործավար	1	80000
Մարզիչ	1	63000
Մանկապարտեզի վարիչ	1	80000
Մանկապարտեզի դաստիարակ (5)	2.5	46300
Մանկապարտեզի դայակ	2	46300
Մանկապարտեզի բուժքույր	1	46300
Մանկապարտեզի խոհարար	1	46300
Մանկապարտեզի հաշվապահ	1	47000
Մանկապարտեզի դռնապահ	1	46300
Մանկապարտեզի պահակ	1	46300
Երաժշտական դպրոցի տնօրեն	1	80000
Ուսուցիչներ (13)	12.6	46300
Երաժշտական դպրոցի հաշվապահ	1	54000
Երաժշտական դպրոցի հավաքարար	1	46300
Տեխսպասարկման անձնակազմ		
կատարածու	1	47000
Պարտիզպան	1	51000
Փականագործ	1	63000
Տնտեսվար	1	63000
Պահակ	2	50000
Հավաքարար	2	47000

Համայնքի ղեկավար՝ Ա.Գյուլամիրյան

Հավելված 2
22.01.2013թ կայացած Քաղցրաշենի
համայնքի ավագանու N2 որոշման

ՔԱՂՑՐԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

2013թ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 22
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄՈՎ/
Համայնքի ղեկավար		170000
Հայեցողական պաշտոններ		
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	119000
Համայնքային ծառայության պաշտոններ		
Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար (1.2-1)	1	120000
Գյուղապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ (2.3-1), (2.3-2)	2	119000
Գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (3.1-1), (3.1-2)	2	86000
Գյուղապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ (3.2-1)	1	81000
Գյուղապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ (3.3-1)	1	80000
Քաղաքացիական աշխատանք		
Մշակույթի տան տնօրեն	1	80000
Գեղմասվար	1	63000
Գրադարանավար	1	56000
Գործավար	1	80000
Մարզիչ	1	63000
Տեխսպասարկման անձնակազմ		
Փականագործ	1	63000
Պահակ	2	50000
Հավաքարար	2	47000
Պարտիզպան	1	51000
Տնտեսվար	1	63000
Կատարածու	1	47000
Ընդամենը	22	1740000

Համայնքի ղեկավար՝ Վ. Գյուլամիրյան